

Այս պորադաները պարզելու համար քիչ մը աւելի խորը մտնենք եւ քննենք անկէ առաջ եղած փաստերն ու տուեալները, որմէ պիտի հասկցուի, թէ քեմալական բոլոր ձեռնարկները պարզ ալա թուրքա խաղեր էին:

Այն ժամանակ, երբ Բերլինի իթթիհատական ղեկավարները բանակցութեան սկսած էին Մոսկուայի հետ, բնականաբար միլլի շարժումը վարողները չէին կրնար երեւակայել, թէ կարճ ժամանակէն ուսակրան կամաւորական բանակը պիտի քայքայուէր, եւ իրենք դրական օգուտ պիտի քաղէին Մոսկուայէն: Մոռնալու չենք նաեւ, թէ այդ միջոցին միլլի բանակը Յունաստանի դէմ մահու եւ կենաց պայքարի մէջ էր: Հետեւաբար, այդ պայմաններու տակ շատ ձեռնտու էր, փոքրիկ զինուորներով Հայաստանի կողմէն թիկունքը սպահովել եւ ամբողջ ուշադրութիւնը դարձնել արեւմտեան ճակատը:

Այս մտածումներով, մեզի ծանօթ է թէ, թուրքերը միջոցներ կը փնտռէին Հայաստանի հետ խօսելու, բայց ուղղակի դիմելէ կը խուսափէին: Կ'աշխատէին կողմնակի միջոցներով կամ միջնորդներու միջոցով այդ ծրագիրը զլուխ հանել:

Սակայն, կարճ ժամանակ յետոյ, երբ ուսական բանակը քայքայուեցաւ, եւ կարմիր բանակը Ատրպէյճան մտաւ, այդ օրէն այլեւ ոչ միայն թիկունքի վախը փարատեցաւ թուրքերու մօտ, չնորհւեալ բոլշեւիկներու շօշափելի եւ իրական աջակցութեան, այլ նոյնիսկ թուրք-բոլշեւիկեան դադանի զինակցութեան Անդրկովկասի նկատմամբ նախատեսած կէտերու իրագործման հնարաւորութիւնները շօշափելի դարձան:

Այդ պայմաններու տակ այլեւս թուրքերը պէտք չունէին Հայաստանի կառավարութեան հետ համաձայնութեան մը մասին խօսելու լրջօրէն, երբ հաստատ դիտէին, թէ Հայաստանի կառավարութիւնը ոչ միայն պիտի մերժէր անդրկովկասեան հին սահմաններէն ներս գտնուող հողերէն թուրքիոյ զիջելու մասին ունէ խօսք, այլ պիտի պահանջէր, որ խօսք ըլլար Տաճկահայաստանի հողերէն թուրքերու կողմէն զիջումի նկատմամբ: Այդ սրատառով ալ թուրքերը պէտք չէին տեսներ բանակցու-

թիւններու հայերու հետ:

Ու այն վերջնապէս, որու մասին կը խօսի Մուսթաֆա Քեմալ, իր բովանդակութեամբ համապատասխան էր իրենց համար ստեղծուած այդ ժամանակուան քաղաքական կացութեան:

Որքան ես կը յիշեմ, այդ վերջնապէսով թուրքերը կը պահանջէին Հայաստանի կառավարութենէն, որ դադրեցնէ իր կառավարական աշխատանքները այն շրջաններուն մէջ, որ, ըստ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի, թողուած էր թուրքիոյ: Օլթիի մէջ հայերու կողմէ քաղաքացիական իշխանութիւն ստեղծելու ձեռնարկը, Մերտէնէկի անխահանքերու շահագործման փորձը, տեղ տեղ տաճիկներու թիւազրուութեամբ՝ ծագած ապստամբութիւններու ճնշումը հայկական զօրքերու կողմէ, թուրքերու հաշուով, թուրք ժողովուրդը կոտորելու ձեռնարկներ էին: Ատոր համար էնկիւրի կը պահանջէր Հայաստանի կառավարութենէն անմիջապէս դադրեցնել այդ ձեռնարկները եւ խաղաղ ճանապարհով լուծել վիճելի հարցերը, պարսկալու որ բանակցութեանց հիմ ընդունուին Բրեստ-Լիտովսկի եւ Բաքու մի դաշնագիրները:

Ինկիւրիի կողմէն ասիկա խորամանկ հրնարք մը չէր միայն մտքեր շիթեցնելու համար, որովհետեւ թուրք փաշաները շատ լաւ գիտէին, թէ ունէ հայ կառավարութիւն նման առաջարկութիւն մը չէր կրնար ընդունել, առանց ինքնաձիտումի, առանց դադրելու անկախ պետութիւն ըլլալէ:

Թուրքերու համար, ի հարկէ, այս «խաղաղ» համաձայնութեան փորձին իմաստը անոր մէջ կը կայանար, որ դէպքերը աստիճանաբար հասունանան պայթումի մը համար, իրենց զինակից Սորհրդային իշխանութիւնն ալ համոզելու համար, թէ առանց պատերազմի Հայաստանի կառավարութիւնը չպիտի թոյլատրէ թուրք-բոլշեւիկեան դադանի ծրագրի իրագործումը:

Սորհրդային իշխանութիւնը հարկաւ անտեղեակ չէր այս թրքական վերջնապէս պատրաստութեան, որովհետեւ նոյն ժամանակներու մէջ, նոյն դժուարութիւններն ու կնճռոտութիւնները ստեղծելու համար ինք եւս